ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (09.09.2024թ.-19.12.2024թ.), ԵՐԿՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԵՐԻ (31.10.2024թ., 05.12.2024թ.) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման ութերորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2024 թվականի սեպտեմբերի 9-ին և ավարտվել դեկտեմբերի 19-ին:

Գումարվել է՝

- 5 հերթական,

- 2 արտահերթ նիստ՝ հոկտեմբերի 31-ին (Աժ պատգամավորների նախաձեռնությամբ) և դեկտեմբերի 5-ին (ՀՀ կառավարության նախաձեռնությամբ):

Ազգային ժողովն ընդունել է 208 օրենք, որից՝

- 6-ը «մայր» օրենքներ են՝ («Սոցիալական աջակցության մասին», «Ոստիկանության գվարդիայի մասին», «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին», «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2023 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին»):

- 176՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,

- 26՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 191-ի հեղինակը Կառավարությունն է, 17-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորները:

Ընդունված օրենքներից 37-ինը գլխադասային է համարվել Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 7-ինը՝ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը, 5-ինը՝ Արտաքին հարաբերությունների հարցերի մշտական հանձնաժողովը, 5-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 37-ինը՝ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 54-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 3-ինը՝ Տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 8-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 38-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը և 13-ինը՝ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝

- **ընդունել է՝**

- «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը:

- **ընտրել է՝**

- Կենտրոնական բանկի խորհրդի անդամ (Լևոն Սահակյան)
- Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի թեկնածու (Վիգեն Քոչարյան)
- Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի թեկնածու (Հայկ Գրիգորյան)
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ (Ավետ Պողոսյան)
- Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ (Մեսրոպ Մեսրոպյան)
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ (Արմեն Մարուխյան)